կոնների կողմից իշխան Դ. Մուխրանսկին, առանձին տեսակցութեամբ ներկայացաւ և Վրաստանի սր. Էքզարքոսը։

Մի խօսքով սեպտեմբերի 16ից մինչեւ 28, որ նշանաւոր և անմոռանալի օր է Կովկասի համար, Նորին Օծութիւնը շարունակ ընդունում էր թէ պաշտօնատար, թէ քաղաքացի և թէ խնդրատու անձանց։

Վեհափառ տէրը անհամբերութեամբ սպասում էր թագաւոր Կայսեր գալստեան օրին։ Նորին Մեծութեան գալստեան նախընթաց օրը գլխաւոր կառավարչապետի օգնական գեներալ ադիւտանտ պ. Շերեմետեւը ներկայացաւ Նորին Օծութեան յայտնեց և գրաւոր կերպով հաղորդեց, որ Նորին Մեծութիւնն թագաւոր Կայսրը բարեհաճել է իւր գալստեան օրը 2¼ ժամին զկնի կէս աւուր նշանակել Նորին օծութեան համար առանձին ընդունելութեան ժամ։

Այս տեսակցութեան ժամանակ կարող են ներկայ գտանուիլ Թադէոս Արքեպիսկոպոսը և Վ.Եհ. Հայրապետի թարգման Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանցը։ Իսկ Թիֆլիզի Առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսն և Վեհափառի քարտուղար Սահակ վարդապետը պատիւ կունենան ներկայանալու Նորին Մեծութեան ընդհանուր ընդունելութեան ժամանակ։

Նշանակած ժամանակ Նորին Վեհափառութիւնը գնաց պալատը և իւր աստիճանին վայել յարգանօք և պատուով առանձնապէս ներկայացաւ Նոցին Մեծութեանց։ Նոցին Մեծութիւնք թագաւոր Կայսրն և Թագուհին առանձին ուշադրութիւն դարձրին Նորին Վեհափառութեան վրայ, որ ասաց հետեւեալ ուղերձը.

«Երջանիկ զանձն իմ համարիմ, Տէր Աբքայ, զի ի վերջին աւուրս կենաց իմոց՝ անգամ մի եւս արժանաւորիմ ներկայանալ Ձերդ Կայսերական Մեծութեան և զիմ ամենահաւատարիմ հպատակութեան զգացմունս խառն ընդ նոյնպիսի զգացմանց հոգեւորականութեան և հօտին իմոյ՝ սփռել առաջի Ամենայն Մեծի Ինքնակալիդ, որով և խոնարհաբար շնորհաւորել զշնորհաբեր այցելութիւն Մեծի Թագաւորիդ իմոյ կողմանցս Կովկասու և Հայաստանի։

«Ցոյս իմ հաստատուն է առ Աստուած, Տէր Աբքայ, զի